600.0172.17.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2017 թվականի №172Ա
քաղ. Երևան

«ԳԱՄ-ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի №101Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2004 թվականի ապրիլի 29-ին «ԳԱՄ-ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականություն-ների հատկացման №9/1-42 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2009 թվականի մարտի 11-ի №101Ա որոշմամբ շարադրվել է նոր խմբագրությամբ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման №0524 թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն), որի պայմանների 4-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված է «Պրագա» ազդականչը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի №03/11.1/1960-17 գրության համաձայն՝ իրականացված ռադիոեթերի մոնիթորինգի և չափումների արդյունքում հայտնաբերվել է, որ ընկերությանը պատկանող ռադիոցանցն աշխատել է իրեն չհատկացված ազդականչով,

գ) հանձնաժողովը 2017 թվականի փետրվարի 17-ի №ԱԲ-356Հ գրությամբ ընկերությունից պահանջել է պարզաբանումներ ներկայացնել հանձնաժողովին իր կողմից Թույլտվության պայմանների խախտմամբ շարժական ռադիոկապի ցանցի

շահագործման վերաբերյալ, սակայն վերջինս հանձնաժողովին որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ վերջինիս կողմից Թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի №ԱԲ-665Հ գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում ընկերությունը 2017 թվականի ապրիլի 12-ին դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ իր կողմից շարժական ռադիոկապի ցանցը շահագործվում է Թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով, միաժամանակ խնդրելով փոփոխություն կատարել Թույլտվության պայմանների մեջ՝ «Պրագա» ազդականչը փոխարինելով «Լադա» ազդականչով,

զ) հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 21-ին փոխօգնության կարգով դիմել է նախարարություն՝ ընկերության կողմից ներկայումս շարժական ռադիոկապի ցանցը շահագործվող ազդականչի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, միաժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետի և 2-րդ մասի հիմքերով երեսնօրյա ժամկետով երկարաձգելով ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

է) նախարարության 2017 թվականի մայիսի 10-ի №03/11/7592-17 գրության համաձայն՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ընկերության շարժական ռադիոկապի ցանցը ներկայումս շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով, և

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 22-ից ընկերության նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 11-ի «ԳԱՄ-ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականությունների հատկացման №9/14-42 թույլտվությունում փոփոխություն կատարելու մասին» №101Ա որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականության օգտագործման №0524 թույլտվության պայմանների 4-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ազդանշանը՝ Լադա.»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
17 մայիսի 2017թ.